ՀԻՆԳՇԱԲԹԻ 23 ԱՊՐԻԼԻ 1881

Լր. տպագրվում է ամեն օր բացի երկուշաբթի և տօն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակի և տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետևեալ հասցէով. Въ ред. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani», à Tiflis (Caucase).

ՄԵՂՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 23 ԱՊՐԻԼԻ

Խմբագրութեան ուղղած թէ յօդուածները և թէ նամակները պէտք է գրած լինին գրողի ստորագրութեամբ եւ հասցէի։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել և կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչև ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին $1\frac{1}{2}$ կոպէկ։
Յայտարարութիւնները ընդունվում են խմբագրատանը եւ պ. Բ. Շահվերդեանի պավիլիօնում։
Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

№ 67 ՔՍԱՆԵՒՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 67

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
Շամախեցիների և Էջմիածնի մէջ եղած տարաձայնութեանց շարժառիթները։
Ազգային.—Գ. Նիկողոսեանի յօդուածների առիթով.—Թղթակցութիւնք Մօզդօկից և Աղէքսանդրոպօլից։
Քաղաքական.—Անգլիա.—Քաղաքական լուրեր։
«Մեղուի» հեռագիրներ.
Մանր լուրեր։
Խառն լուրեր։
Յայտարարութիւններ.
Բանասիրական.—Թղթակցութիւն Կ. Պօլսից։

ԹԻՖԼԻԶ, 23 ԱՊՐԻԼԻ 1881 Թ.

«Մեղուի» մէջ Շամախու հայ հասարակութեան մէջ ծագած դժգոհութեանց մասին խնդրել էինք, որ պարզեն այդ երկպառակութեանց պատճառները, թէ որքան ճիշդ են այն տեղեկութիւնքն, որ հեռագրով հաղորդած էր խմբագրութեանս, որ ս. Էջմիածինը արդարութեամբ չէ վճռել շամախեցոց դատն և ժողովրդի իրաւունքներն ոտնակոխ է արել։.

Մենք երկու վիճող կողմերից էլ ստացանք գրութիւնք և մեզ համար բաւական պարզ է այժմ հարցը։ Մենք չենք հրատարակում այդ գրութիւնքն, որպէսզի գրգռմունքն աւելի չզօրանայ և գլխաւորապէս այն պատճառով, որ ինչպէս երևում է այդ տեղեկութիւններից, երկպառակութեանց պատճառները շատ աննշան բաներ են և եթէ մէջտեղը դրամական հաշիւներ ևս կան—դարձ էլ այնքան աննշան գումարներ են, որոնք չէին կարող գրգռել ում և իցէ շահասիրութիւնն։ Իսկական պատճառը գրգռման երևում է անձնականութիւնն և իւր խօսքը գլուխ տանելու ցանկութիւնը։ Բայց այսպիսի շարժառիթները հասարակական գործերի մէջ տեղի չպիտի ունենան. Թո՛ղ գործը կատարվի ում ձեռքով և անուամբ կուզէ լինի—հասարակութիւնն այդ դէպքում ոչինչ չի կորցնիլ։

Մենք վստահ ենք Շամախու հայ հասարակութեան խոհեմ անդամների վերայ, որ նոքա մեծահոգութեամբ կը վարվին և իրանց առաջնորդի՝ Թադէոս եպիսկոպոսի հետ, որ մի պարզ և բարեմիտ անձնաւորութիւն է, միանալով, սիրով կ'բառնան երկպառակութեան որոմն, որ ոչ մի կողմին պատիւ չէ բերում։ Յօգուտ հասարակական գործի դիջանող կողմնն է յաղթանակն, և ոչ անձնասիրութեամբ յամառողը։ Այսպէս մեր շամախեցի եղբարք թէ իրանց եկեղեցին կ'շինեն ու կ'պայծառացնեն և թէ դպրոցները կ'ապահովեն։ Թո՛ղ լրջմտութեամբ և անվրդով սրտով և կրքերից ազատ խորհեն և գործեն—կ'տեսնեն, որ երկպառակութեան ոգին ինքն իրան կ'վերանայ մէջտեղից։ Զիջողութեան և գործակատարութեան մէջ իրար գերազանցել ջանալումն է հասարակական շահերի պաշտպանութիւնն և ոչ նորանում, որ ամեն անձն իւր անձնաւորութիւնը հանդէս բերել ձգնի ի ցոյց մարդկան։ Հապա ուր կ'մնան այն ժամանակ անձնուիրութիւն, զոհ, անշահասիրութիւն բառերն, որոնցով զարդարվածներն են հասարակութեանց տունը շինողները։ Մեր շամախեցի եղբարք այնքան հին ժողովուրդ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կ. ՊՕԼԻՍ.

11/23 մարտի.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Աղէքսանդր Բ-ի հոգեհանգիստ։ Ներսէս պատրիարքի հրաժարական մի ևս։ Քննադատք պատրիարքարանին։ Հայ խմբագիր մը որ դարձի կուգայ։ Պէտք է յուսալ թէ յուսահատիլ։ Եղիշէի մեկնութիւնը։ Հայկական սեպագիրք և Պ. Հիսարլեան։ Նորայրի բառարան։

Նոքա որ կը սիրեն եկեղեցական փառաւոր հանդէսները, պէտք էին գտնուիլ մեր Պօլսոյ մայր եկեղեցին այս ապրիլի 7-ին ուր հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ կար ռուսաց կայսեր Աղէքսանդր Բ-ի համար։ Ի հրաւիրելոյ միայն Ռուսիոյ, Ռումանիոյ, յունաց և Սերբիոյ դեսպանք և Գերմանիոյ բոլոր դեսպանատան պաշտօնեայք բաց ի դեսպանէն եկած էին։ Եկեղեցին փայլուն զարդարուեր էր, անհագին բազմութիւն կը խռնուէր դռներուն քով և զինուորական պահապանք և կարգապահ երիտասարդաց խումբ մը կը հսկէին հրաւիրելոց անխառն հանդիսատեսութեան։ Սրբազան Պատրիարք հայրն կը պատարագէր, չորս եպիսկոպոսունք՝ չորս վարդապետք և քահանայից բազմութիւն կ'սպասաւորէին սեղանոյն, սարկաւագք և դպիրք Պօլսոյ եկեղեցեաց ընտրանօք ժողովեալ, ամենալաւ երաժիշտքն էին, այնպէս որ շատ քիչ անգամ եղած է որ հայկական եկեղեցւոյ վսեմ և միանգամայն տխուր արարողութիւնն այն ազդեցութիւնն ունենայ ժողովականաց վրայ, ինչ որ սա ունեցաւ նաև օտարաց վրայ թէպէտ լեզուն ամենևին չէին իմանար։ Բայց ձայներու հնուագաց քաղցրութիւնը, Պատրիարքին ծանր և վսեմ կերպարանքը շրջապատեալ ի բարձրաստիճան եկեղեցականաց, զգեստներու ճոխութիւնն, եկեղեցւոյն փառաւոր զարդարանքը, հաճոյական էին ամեն ներկայից։

Բայց շատ միտքեր նաև զբաղած էին Ներսէս Պատրիարքի հրաժարականաւը որ կարելի չէր մեկնել դիւրութեամբ վասն զի նա ազգային ժողովոյն իմացնելով այդ հրաժարականը պատճառ չէր յայտնած. ամեն ոք ըստ իւր տեսակէտին կը մեկնէր այդ հրաժարականը, ոմանք կըսէին, կը հրաժարի վասն զի ձանձրացած է շատ մը չահասէր անձանց յարձակմունքներէն, և ազգին դէմ եղած տաճկական տէրութեան թշնամութիւնէն որ ամեն առթի մէջ թէ ի գաւառս և թէ մայրաքաղաքիս մէջ չի դադրիր անիրաւ բռնաբարութիւններ ընելէ և զանազան առաջնորդաց դէմ ամբաստանութիւններ յարուցանելէ։ Իբրև թէ բաւական չէր հայոց պատմութեան դէմ պատերազմը, հիմա հաւաքածոյ երգարանի մը դէմ նաև կռիւ մը կը հանէ և տպագրիչը բանտ կը դնէ։ Օրագիրները կ'ընդհատէ, կ'արգելու և նորերու հրատարակութեան հրաման չի տար։ Մշոյ առաջնորդը իբրև ամբաստանեալ հոս է. նոյնպէս Սեբաստիոյ առաջնորդը. հիմա Եւդոկիոյ և Երզնկայի առաջնորդները կ'ամբաստանէ և նոյա յետս կոչումը կը պահանջէ. պատրիարքարանը այս բռնաւոր և անտեղի պահանջմանց չ'զիջանիր դիւրութեամբ որովհետև արդէն եկեղեցւոյն վրայի ամբաստանութիւնք, զալերնէն վերջը իբրև ստուեր կը հալածէին։ Ուրիշները կըսեն թէ, բնական է որ իւր հրաժարականը ազգային ժողովքը չընդունիր և չի կրնար ընդունիլ, և ինք գիտէ, այլ կրկին և կրկին հրաժարումը հասկցնելու համար է մեծին և պզտիկին, թշնամւոյ և բարեկամի, օտարի և ընտանւոյ թէ ազգը մինչև վերջը իրեն հետ անբաժանելի է և համամիտ։

Ի՞նչ և իցէ, հիմա Պատրիարք մը ունինք հրաժարեալ ու մինչ մայիս յանձն կառնու վարել իւր պաշտօնը, և մեր յոյսն է որ ազգային ժողովը ինչպէս հաւանական է երբ չընդունի հրաժարականը դարձեալ ազգանուէր չարունակէ իւր ծառայութիւնը։

Յիրաւի ազգը ունի քանի մը առաքինի և կարող անձինք արժանի պատրիարքական աթոռին, բայց հիմա այս ծանր պարագայից մէջ ոչ ոք կարծէ թէ մէկը կարենայ հաւասարիլ Ներսէսի։ Ոմանք զինք կ'ամբաստանեն իբրև անտարբեր պատրիարքարանի ծախուց մասին, և կարծեն թէ կարելի է աւելի խնայութիւն մտցնել և աւելորդ գումար մը անտից հանել դաստիարակութեան։ Բայց Պատրիարքը որ բարձր սիրտ ունի, չի կրնար հանդուրժել նոյն ազգային պատւոյն համար որ պատրիարքարանի պաշտօնեայք կարօտութեան մէջ հեծին։

Կամ նաև անձինք որ իւր չափազանց ներողամտութեանը կը զայրանան և ապականութիւն դայն կ'անուանեն, վասն զի կը տեսնեն որ ազգին օգտին դէմ յարձակողներուն և մատնիչներու և զրպարտիչներու նաև կը ներէ, և մինչև օգնութեան ձեռք նոյն կը կարկառէ երբ գթութեան կը դիմեն, վասն զի իւր աւետարանական սկզբունքն է նմանիլ երկնաւոր հօրը՝ ներել անսահման որոց և մոլորեալ ոչխարները ի փարախ ածել։ Նա չէր ուզեր անուանել և մատնանիշ ցցնել գրիչ մը որ երկու տարի չարունակ ամեն չարակամութիւն ի գործ դրաւ, ազգին ամեն ջանքերուն դէմ մաքառելու, բամբասեց, զրպարտեց, ծաղրեց հայրենիք, Հայաստան, ազգութիւն, հայութիւն, Պատրիարք, պատգամաւոր և ամեն մարդ որ ազգին յայտնի և անյայտ օգտին կ'աշխատէր, չ'ազատեցան իւր թունաւոր խայթոցէն երեսփոխանք և պատանիք որ առանց չափու ջանացին ողորմութեան լուման ժողովել, ինկած Հայաստանի լեռները դպրոցներ հաստատելու, ուր դպրոցի գաղափար չի կար. գիտութեան օգուտը քարոզելու, ուր տգիտութիւնը կը տիրէր դարերէ ՚ի վեր. փայլեցութեան և մաքրութեան ճաշակ տալու՝ ուր խորթութիւն, աղտեղութիւն՝ օրէնք և սովորութիւն էին դարձեր։ Չազատեցան իւր կծու քննադատութենէ այն մարդիկը որ ինքնայօժար բացին իրենց սիրտը և քսակը Հայաստանի սովեալ եղբարց, բացին իրենց ձեռքը [illegible] ի մօտոյ և ի հեռուստ հացին պատառը տալու համար կիսամեռ քաղցելոց, դեղ և բժիշկ հասցնելու համար հիւանդաց և ախտացելոց, սերմ, խորհուրդ և քաջալերութիւն յորդելու համար՝ ապագայէն յուսակտուր ողորմելոց։

Այո՛ պէտք է այդ մարդը անուանել և անուանարկել, այդ էֆէնտին կարապետ փանոսեանն է, «Մանզումէի» խմբագիր։ Եւ զարմանալին հոն է որ Ներսէսի մեծ և անյիշաչար սիրտը ներողամիտ է մինչև և այսպիսեաց, և կուզէ հետևիլ Ղևոնդեանց սուրբ օրինակին որ դաւաճանի մը ներեցին և զղջմանն հաւատացին, և չ'ուզեր յիշել թէ ինչչափ վնասներ հետևեցան այդ ներողամտութենէն։ Այո՛ չէր ուզեր անուանել այդ անձը, որ երբեմն ծառայութիւններ մատուցած է ազգին, և ազգը պէտք է խոստովանիլ որ զինք վարձատրած է վասն զի երկայն տարիներ իւր լրագիրը քան զամենքը բազմաթիւ բաժանորդ ունեցեր է, բայց ինք արեգական լուսոյ տակ, յայտնի համարձակ նախատեց, ամբաստանեց, զրպարտեց զամենքը, վասն զի գիտեր թէ տաճկական ոչ դատին, այլ անիրաւ կառավարութեան պաշտպան և զինուոր հանդիսանալով իւր ազգին դէմ, ոչ ոք չէր համարձակեր իրեն դէմ գրելու. և ազգային լրագրաց ուրիշ ճար չէր մնացեր այլ չ'տեսնել այդ լրագիրը և իւր գոյութիւնը, չ'լսել իւր թշնամանքը ընդդէմ անոնց որ հնարք կը փափաքէին և կը փափաքին բարելաւելու հայրենի երկրին վիճակը։ Իրաւ արժանաւոր պատիժը գտաւ այդ մարդը, վասն զի իւր բաժանորդք թօթափեցան իրմէ և իւր լրագիրը հոգեւարք վիճակին հասաւ։ Բայց իւր վնասը կայ ու կը մնայ, ինք են և փորձառու, որ անտարակոյս չեն կամենալ անհամաձայնութեամբ իրանց տունը քանդել յուրախութիւն իրանց թշնամեաց, որոնք անշուշտ ժպտուն երեսներին սպասում են որսի:

ԱԶԳԱՅԻՆ

Պ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԻ ԱՌԹԻՒ·

Կարդալով «Մշակի» մէջ «Մասիսից» արտատպած պ. Նիկողոսեանի յօդուածները, ամենից առաջ ես զարմացայ «Մասիսի» խմբագիր պ. Խաթունձեանի վերայ, որ նա ի՞նչպէս յանձն է առել տպել այդպիսի մի վնասակար յօդուած ընդհանուր ազգային շահին, նամանաւանդ, որ հակառակ է անշուշտ նոյն իսկ և իր գաղափարին:

Մեզ աւելի ես զարմացնում է այն, որ «Մշակն» ի՞նչ սխալից արտատպելու այդ յօդուածը: Նշանակում է, որ գործով «Մշակը» յայտնում է իր գաղափարը. Ուրե՞մն «Մշակը» մինչև հիմա իր քաղաքական ուղղութիւնը վնասակար է պահում և շտապում է շուտով ուղղելու այդ սխալը, և հէնց դորա վերայ հիմնուելով, հարցնում ենք հրապարակօրէն «Մշակից». եթէ մինչև հիմա դուք լուրջ չէիք մտածել և մի հաստատ գաղափար չէիք կազմել այդ կարևոր հարցի վերայ, խնդրեմ ասացէք, էլ ի՞նչ իրաւունքով ամեն օր գոռում գոչում էիք ձեր թերթի մէջ այդ ընկերութիւնների համար և մինչև անգամ նախատում, հայհոյում ժողովուրդը նորա սառնասրտութեան համար դէպի նուիրատուութիւնները և այսօր հակառակն էք պնդում: Այս դէպքում, ուրեմն ազգը մեծ իրաւունք ունի պահանջելու «Մշակից» այն՝ ինչ որ տուել է: Մի՞թէ ժողովուրդը խաղալիկ շինելն է խմբագրի պարտականութիւնը, եթէ ոչ, ապա ի՞նչ կընշանակէ—այսօր նորան քարոզես այս, վաղը այն: Այսպիսի հանգամանքներում, եթէ մեր ժողովուրդը ժողովուրդ լինէր և քննողական հայեացք ունենար, այն ժամանակը նա ցոյց կըտար խմբագրին իր պարտաճանաչութիւնը: Մեր ժողովուրդն է մեղաւոր, որ խմբագիրները իրենց սուրբ պաշտօնը չեն ճանաչում և հետևապէս հասարակութեան պատիւը: Եւ թէ դեռ չը բաւականանալով պ. Նիկողոսեանի յօդուածներով, ինքն խմբագիրը շարունակում է գրել «Մեր թուլութիւնները» առաջնորդող յօդուածը, որ միայն ամօթ ու նախատինք է արժանի: Թողնենք «Մշակը» և անցնենք դէպի պ. Նիկողոսեանը:

Պ. Նիկողոսեանը իր յօդուածի երկրորդ մասը հասարակութեան հայհոյում է սկսում: Նախ՝ մենք այդ պարոնին չենք կարող ընդունել գրագէտ և խոհեմ մարդ, բայց որում հայհոյանքը միայն փողոցային մարդու գործ է: Երկրորդ՝ նորա յանդգնութեան աւելի, որ նա յանուն 1½ միլիօն ռուսահայերի կողմից սպառնում է Միաբանեալ ընկերութեան՝ եթէ վերջինս չը կատարէ նորա առաջարկութիւնը, կասենք որ նա (Նիկողոսեանը) ոչ յայտնի է այն հասարակութեան. որի կողմից իբր հրաշխաւոր խօսում է, և որ ժողովրդի հաւատարմութիւնից բոլորովին զուրկ է: Երրորդ՝ զարմանալի է նորա գործի անտեղի լինելն ու անհեռատեսութիւնը գործին, որ դժուար կարողանում է կատարել և՛ եւրոպական մի կառավարութիւն քանի յիսուն տարիների ընթացքում, այն էլ մեծ նիւթական միջոցներով, նա պահանջում է այդ գործը Պոլսի հասարակութիւնից, այն էլ ուսումնարանները փակելով արհեստ տարածել և կատարելագործել: Ասենք ուսումնարանները փակվեցան, և մի՞թէ դոցա չնչին մայր գումարով կարելի է իրագործել Նիկողոսեանի երազական ռէֆօրմները:

Թիֆլիզ· Եղբ.

ՄՕԶԴՕԿ

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Մարտի 26-ին կիւրակէ օրը տեղոյս Հայոց երկսեռ դպրոցների հոգաբարձութիւնը կատարեց Հայ օրիորդաց դպրոցի փառաւոր շինութեան օրհնութիւնը: Այդ շինութեանը յանձնառու են եղել կառուցանել ազգասիրական ազնիւ զգացմունքից գրգռուած յարգելի պ. Պետրոս և նորա կողակից Նունէ Գանջումեանցները: Թէև ոչ մի ծանուցում նախապէս չէին արել այդ մասին եկեղեցիներում և ոչ մի հրաւէր չէր ուղղած հասարակութեանը, բայց այդ օրը սովորականից դուրս շատ մեծ բազմութիւն մարդկանց և կանանց լցուել էր սուրբ Ստեփաննոս եկեղեցին, որի գաւթի ընդարձակ անկիւններից մինում կառուցանվում է դպրոցի գեղեցիկ շինութիւնը: Եկեղեցում ներկայ էին օրիորդաց և արական դպրոցների բոլոր աշակերտուհիներն ու աշակերտներն, հոգաբարձուք և ուսուցչաց խումբը: Պատարագը վերջանալուց յետ, ժողովուրդը մի առանձին ոգևորութեամբ դիմեց դէպի ուսումնարանի հիմքն՝ իւր առաջն ունենալով զգեստաւորված քահանայից բազմութիւնը և երկսեռ դպրոցների աշակերտուհիներն ու աշակերտներն: Հիման վերայ, որը գետնից արդէն մի փոքր բարձրացրած էր, ուղիղ այնտեղ, ուր գտնվելու է դպրոցի առաջին բաժանմունքը, դրած էր սեղան, որի շուրջը բռնեցին եկեղեցական դասն ու յարգելի հիմնադիրք: Սեղանից աջ և ձախ կանգնած էին աշակերտուհիներն ու աշակերտներն և մեծ բազմութիւն կանանց, իսկ աղամարդիկ անզատորված էին ընդարձակ շինութեան միւս կողմերն: Այս բոլորը մի այնպիսի հիանալի տպաւորութիւն էին թողնում նայողի վերայ, որ մարդ ակամայ կամօք մտածում էր՝ մի՞թէ միշտ օրական կարիք է դարձել Մօզդօկի հասարակութեան համար իւրեանց որդոց դաստիարակութիւնը: Եկեղեցական դասը մի քանի աղօթքներ կատարելուց յետ, դուրս եկաւ Հայ օրիորդաց դպրոցի բարձր դասատան աշակերտուհիներից մինն ու կարդաց հանդիսին պատշաճ ճառ:

Կարդաց ճառ նաև ուսուցիչներից մինն, որով պարոնը համառօտապէս ցոյց տուեց՝ թէ որքան բարիքներ է տալիս ուսումնարանն ընդհանրապէս և ապա շօշափելի օրինակներով հասկացրեց հասարակութեան կանանց կրթութեան մեծ նշանակութիւնը, յորդորելով՝ որ ամենն ևս իւր կարողութեան չափով պէտք է աշխատէ իւր դպրոցների յառաջադիմութեան համար:

Հանդէսը վերջացաւ Աստրախանի վիճակային առաջնորդ Գէորգ վեհապետեանի հիմնադիրներին ուղարկած շնորհակալութեան և օրհնութեան հեռագիրն կարդալով ու հոգաբարձութեան բերանով ժողովուրդի կողմից յարգելի հիմնադիրներին շնորհակալութիւն մատուցանելով: Ժողովուրդը ամենամեծ ոգևորութեամբ և խորին շնորհակալութեան զգացմունքով շարժուած, մօտենում էր ազնիւ բարերարներին և իւր կրկնակի շնորհակալութիւնն յայտնում, բարեմաղթելով Ամենաբարձրեալից երկար կեանք՝ իւր բարերարներին, որոնք ոչ թէ լոկ խօսքով ցոյց տուեին դէպի ինքն ունեցած սէր ու կարեկցութիւնն, այլ նաև գործով ապացուցին այդ, յանձն առնելով կառուցանել Հայ օրիորդաց դպրոցի համար մի այնպիսի փառաւոր ու յարմարաւոր շինութիւն, որի նմանն Մօզդօկից աւելի հարուստ քաղաքներից շատերն գուցէ շատ տարիներից յետ ունենալու բախտ կունենան:

Դպրոցը բաղկացած է վեց սենեակից՝ մի շատ ահագին դահլիճ յարմարեցրած թատրոնական ներկայացումների և հանդէսների համար, երեք ընդարձակ դասատնեակներ առողջապահական բոլոր պահանջներին յարմարեցրած, երկու սենեակ վարժուհու բնակութեան համար և մի խոհանոց: Եթէ դորա վերայ աւելացնենք և այն՝ որ ամբողջ շինութիւնը յարմարեցրած է լաւ ուսումնարան լինելու առողջապահական այլ և այլ պահանջներին, այն ժամանակ վերջացրած կը լինենք այդ ուսումնարանի շինութեան համառօտ նկարագրութիւնը: Որքան աւելի մեզ ինժէ–

միակ հայն եղաւ որ յայտնի համարձակ իւր ազգին դէմ կռուեցաւ կատարեալ նիզակակից լինելով, ինչպէս լեզուաւ՝ նոյնպէս և հոգւով «Վաղըթ» և «Հազինգաթ» Թուրք լրագրաց:

Այդ տաճիկ լրագիրք թերևս վաղը, Եւրոպիոյ մեծ պետութեանց խաղաղասիրութեան և նահանջման առջև, կարելի է որ յաղթանակ կանգնին երբ տեսնեն թէ Պեռլինի դաշնագրին գործադրութեան յօդուածներն ու խրատներն անօգուտ լինին և անլսելի մահմետական կառավարութեանէն: Բայց այս միթէ կրնայ նշանակել, թէ Հայաստան և ուրիշ ամեն ասիական գաւառք երջանիկ վիճակի մէջ են: Ոչ երբէք: Մենք կուզենք հաւատալ թէ 1856-ի փարիզու դաշնագրութեան յիշատակէն զրգեալ եւրոպական մեծ պետութիւնք, այս անգամ զօրաւոր ազդեցութիւն մը գործածեն բարելաւելու համար մեր ազգային բաղդը, յանուն այն մարդասիրութեան որ Ափրիկէի սևերուն համար ի գործ դրած է գերեվաճառը ջնջելով: Այո՛ մենք կը յուսանք մարդկային յառաջադիմութեան ոգւոյն. գիտութեանց ծաւալման, զանազան ազգաց և ժողովրդոց շահերու իրարու կապակցութեան վրայ, և որ աւելի մեծն է յոյս ունինք Աստուծոյ ողորմութեան վրայ, որ զպուլղարները ազատեց Հօրը ձեռօք և որ կրնայ զհայերն ազատել Որդւոյն ձեռօք և Նորա մէկ խօսքովը: Թող մեր պարզամտութեան վրայ ծիծաղին զօրաւոր գլուխներ ինչպէս կը ծիծաղին ամեն հաւատքի վրայ, ինչպէս կը ծիծաղին Նախախնամութեան վրայ, և երբեմն ինչպէս կը ծիծաղէին Քրիստոսի վրայ, ինչպէս կը ծիծաղէին Գալիլեայի և Քոլոմպոսի վրայ: Ի բաց առեալ մեզ պէս միամիտները, կան նաև հեռատես դիւանագէտներ որ Պետրպուրկի Անգղիոյ դեսպան լորդ Տըֆէրէնի Պոլսոյ դեսպան անուանելն, նպաստաւոր կը համարին հայկական խնդրոյն, այն տեսակէտով որ եթէ Անգղիա և Ռուսիա միաբան կամք ցուցնեն կարելի չէ Թուրքիոյ նոցա հակառակել և Պեռլինի դաշնագրին 61-րորդ յօդուածը մնացած տառ համարել:

Խօսինք քիչ մ'ալ հայ գրականութեան վրայ, վասնզի կան լուրջ մարդիկ որ կը աշխատին և իրենց զուարճութիւն և գործ ըրած են, քննել հայոց լեզուին արմատը, իւր պատմութիւնը, իւր գաղթականութիւնը, մինչև իւր այն մասնագիրները որ ամեն մարդ կարծէ թէ գիտէ և կը ճանչնայ: Ես իմ բաժնիս, որ եթէ հարիւր տարեկան լինիմ, գիտեմ թէ ուսնելու նիւթ չի պակսիր ինձ, և կարծէի թէ մեր հեղինակաց մէջ կը հասկնամ և գիտեմ Եղիշէ, հիմա այսօր համոզուած եմ թէ մինչև հիմա չեմ հասկցեր այդ գիրքը որ այնչափ քաղցր և այնչափ պարզ ոճ ունի. և որ գրեթէ ամեն աշակերտի ձեռք դառնած է իբրև դասագիրք: Բարեբաղդաբար գիտնական և ծանրագլուխ երիտասարդ մը այսօր այնպիսի աշխատութեան մը ձեռք զարկած և գրեթէ լրացուցած է որ կրնանք այդ գիրքը ամբողջ հասկնալ և մեծ օգուտ քաղել, ոչ միայն մեր նախահարց սովորութեանց, իշխանութեանց, դաստիարակութեանց, կանանց և արանց իրերաց հետ վերաբերութեանց՝ կառավարութեան և երկրին ներքին անտեսութեան, այլ նաև մեզ շրջապատող ազգաց պարսից և յունաց օրինաց և կարգաց կրնանք տեղեակ լինել: Եւ չի կարծէ ոք որ այս Եղիշէի մեկնութիւնը թեթև աշխատութիւն մի է, ոչ, այլ բառ մը, բան մը, չիկայ որ մութ մնացած լինի, ամենայն ինչ բացայայտուել կայ, վասն զի հինգ տարուան խուզարկութեանց և երկանց արդասիք են, և Եղիշէի պատմութեան հինգ անգամ մեծութիւնն ունի: Հոն ուր Հայկազեան բառարանն զքեզ կը սխալեցնէ կամ գոհ չըներ, հոս Եղիշէի մեկնիչը ձեզ կ'ուղղէ և գոհ կընէ, և ուր նա «բառ անյայտ» կը պատասխանէ, սա քեզի բուն բառին ճշգրիտ նշանակութիւնը կը յայտնէ: Վասն զի սա կը գիտէ պարսկին, պահլաւին, ասորւոյն և սանսգրիթին: Այս աշխատութիւնը կատարելու համար հարիւր կտոր գիրք կարդացեր է հեղինակը որոց տասնհինգ հատորը կրկին և երեքկին և ուշադրութեամբ ունենալով: Մէկ երկու ամիս է կը յուսամ թէ տպագրութեան կ'երթայ այդ գրութիւնն և ազգը կունենայ այն լուրջ հեղինակութիւններէն մին որ սովորաբար և տարաբաղդաբար շատ քիչ անգամ երևան կուգան:

Այն առեն այն գրքին մէջ պիտի տեսնենք Եղիշէի բուն իր անձին պատմութիւնը և կեանքը, իւր Վարդանը կատարելութեամբք, առաքինութեամբք, և տկարութեամբք, հոն պիտի տեսնենք Վասակայ անզգամ և դժոխային սև հոգւոյն քով այն յատկութիւնքն որ Միլտոնի սատանային վրայ կը փայլին: Հոն այդ երիտասարդին խուզարկութեանց և խորհրդածութեանց մէջէն դուրս կ'ելնեն յատկանիշ բնաւորութեամբ Ղևոնդ, Յովսէփ և Սահակ, և քրիստոնէութեան ոգին որ կը տիրէ Հայաստանի և նորոգ ազգութեան հետ կը ձուլուի: Հոն կը երևայ Յազկերտ մեծ և կրօնամոլ արքայից արքայն, իւր դրադաշտական նախանձայուզութեամբն, և ոգւով տկար և փոքրիկ կայսրն յունաց Թէոդոս իւր նեղ և սահմանափակ կրօնամոլութեամբն:

Չեմ կրնար լռութեամբ անցնել ուրիշ մէկ անձի մը համար որ 30 տարի առաջ ծանօթ եղած է ազգին քանի մը հեղինակութեամբք և Բանասէր անուանեալ հանդէսիւ մը: Եւ որու համար ոչ ոք կարծէր թէ կայ և կենդանի է, վասն զի գրականական ասպարիզէն քաշուած կեանքը կ'անցնէր, բայց ոչ յանօգուտ. Իւր ուշադրութիւնը բոլորովին դարձուցեր էր այդ մարդը այն քարերու վրայ որ հայոց պատմութիւն և լեզու կը պահեն անթափանցելի դարերու և որ ի Վասպուրական յԱյրարատ և յայլ և այլ գաւառս Հայաստանի ցան և ցիր կը գտնուին: Եւ այդ մարդը առած էր ինքզինքը այն ճգանց. և վերջապէս քսան տարի աշխատութենէ վերջը կրցաւ հանել առեղծուակը՝ մութին լոյսն յաջորդեց, երբ իր սև մազերը սպիտակացան և նոքա որ կը կարդային չէին իմանար, վասն զի ամեն լեզու գիտէին բայց հայերէն չգիտէին պիտի տեսնեն, հիմա թէ Շամիրամ և ասորին բան չունին այդ տեղ, այլ հայ թագաւորներ են որ կը խօսին իրենց այն ժամանակի լեզուաւ այն հայերէնով որ մայր է մեր գրաբարին ինչպէս մեր այսօրուան աշխարհաբարը շարունակութիւնն է հինգերորդ, տասներորդ, տասնհինգերորդ դարերու հայերէնին:

Այսպիսի աշխատութեան հետևող անձ մը օտարներու կը դիմէ իւր գործին տպագրութեան համար, և հազար ափսոս չի գտնուիր ազգին մէջ որ այդ գործը լոյս տեսնէ: Ազգին նիւթական և բարոյական վիճակին տեղեակ անձինք չեն զարմանար, նոքա որ այսպիսի նիւթի մը յարգը գիտեն, հարուստ չեն, իսկ նոքա որ հարուստ են այսպիսի աշխատութեան յարգը չեն ճանչեր: Դժբաղդութիւն մի է, բայց պէտք է տանել և սպասել. երեմիական ողբեր և պառաւական անէծքներ յիմարութիւն են. դարերու հեռևանք ազնուութիւնը մէկ քանի տարիներու մէջ չ'անհետանար:

Նորայրի բառարանը որ լաւ գործ մը կը լինի և օգտակար և ամենէն կատարեալը մինչև հիմա եղածներէն désespoir յուսահատութիւն բառին հասած է, փափաքելի է որ հեղինակին վրայ ալ յուսահատութիւն չի հասնի, և շարունակէ իւր տպագրութիւնը: Խեղճ երիտասարդը պէտք է գիտնայ ազգը որ ամեն սրբագրութիւնքն ինք կատարելէ վերջը, ինքն է նաև իւր գործին ցրուիչը: Խորհրդածութիւնը աւելորդ է, ընթերցողք խորհրդածեն, բայց չի յուսահատին:

Սօփէան.

ների գրած այդ շինութեան նախահաշիւը տեսողներին, շինութիւնը լինելու 17,000 ռուբլի 75 կոպ. արժողութեամբ: Մօզդօկի երկու ուսումնարանների բարերարների՝ տղայոց դպրոցի շինութեան հիմնադիր՝ հանգուցեալ Գրիգոր Թումանեանցի և օրիորդաց դպրոցի շինութեան՝ պ. Պետրոս և սորա կողակից տիկին Նունէ Գամզոււմեանցների անուններն միշտ անջինջ կը մնան մօզդօկցիների սրտերում և որպէս ժառանգութիւն անցնելով որդոց որդի և առաւել կը բարձրանան:

Կ. Վ.

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Սահականուշեան օրիորդաց դպրոցի աղքատիկ սանուհիները ի շարս այլ ողորմած բարերարների շարունակ վայելում են ի Տէր հանգուցեալ Գ. Վարդան Տիգրանեանցի շնորհը, որ կտակած է նոյն դպրոցին չորս հարիւր ռուբլի: Յիշեալ Վարդանի եղբայրներն Կարապետ և Տիգրան Տիգրանեանցները իւրեանց եղբօր յիշատակը իւրաքանչիւր տարի արժանաւոր կերպով տօնելու համար սիրել են միշտ անմահ Վարդանից նահատակութեան յիշատակի օրը մի համեստ նախաճաշիկով պատուել նոյն դպրոցի վարչութեան անդամներին:

Այս տարի փետրուարի 19-ին նոյն օրը յիշեալ եղբարց տան մէջ բոլոր ներկայ եղողների ցանկութեամբ իւրաքանչիւր ոք պարտաւորուեցաւ ամեն մի օտար բառ գործածելիս՝ յօգուտ Հայաստանի սովելոց հինգական կոպէկ տուժել, որպիսով և հաւաքուեցաւ երեք ռուբլի յիսուն կոպէկ, որ ահա ուղարկում եմ խմբագրութեանդ խնդրելով հասցնելու ըստ պատկանելւոյն:

Մ. Տէր-Սարգսեանց.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ.

Անգլիայի պատգամաւորների ժողովում Բրադլօն երդուելու կամք յայտնեց: Նորթկօտը առաջարկեց, որ խստութեամբ պահանջուի, որ Բրադլօն կրկնէ երդման խօսքերը: Գէվլին այդ առաջարկութեանը ընդդիմանալով, իւր կողմից առաջարկեց, որ ժողովը յայտնէ, որ ինքը չէ կամենում արտաքին ձեւերի պահպանելովը դժուարացնել կատարելու իւր անդամին օրէնքով կարգադրած ձևը: Գէվլի առաջարկութիւնը պաշտպանում էին Գլադստոն և Բրայտ, բայց այդ մերժուեցան 208 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 175-ի. Բրադլօն չէ կամենում հեռանալ պալատից: Նորթկօտը հարցնում է. կամենում է արդեօք Գլադստոնը պաշտպանել սպիկերի հեղինակութիւնը: Գլադստոնը յայտնում է, որ յիշադպ գործելակը թողնում է ժողովի մեծամասնութեանը: Նորթկօտը պատասխանում է, որովհետև Գլադստոնը հրաժարվում է պալատի առաջնորդի պարտաւորութիւնից, ուստի նա առաջարկում է, որ Բրադլօն դուրս գնայ պալատից: Առաջարկութիւնը ընդունուեցաւ: Բրադլօն ընդդիմանում է և յայտարարում է, որ նա կ'հնազանդի ոյժին միայն: Նորթկօտը հրաժարվում է յիշադպ անելիքը առաջարկելուց և ասում է, որ այս ամենը կառավարութեան գործն է: Գլադստոնը ասում է, որ այդ մեծամասնութեան գործն է, որը համաձայնվում է զեկուցման հետ: Լօուէնը առաջարկում է յետաձգումը, որովհետև ոչ կառավարութիւնը և ոչ էլ դիմադրող կուսակցութիւնը չեն կամենում պալատի որոշումը լօգիքական վախճանին հասցնել: Լօուէնի առաջարկութիւնը ընդունուեցաւ:

Ընթերցողին ծանօթ է Բրադլօն: Այս անձը ոչ մէկ կրօնի չը պատկանելով, իւր համոզմունքի դէմ էր համարում երդուել Թագուհուն հաւատարիմ լինելու, այն ձևով, ինչպէս անգլիական կամ կաթօլիկ եկեղեցին որոշում է: Ի հարկ է, քանի որ Բրադլօն հաւատ չունի, նորա կողմից բոլորովին լօգիքական է, չերդուել այն կրօնական սկզբունքի հիմանց վերայ, որոնց նա մերժում է, չէ ընդունում: Միւս կողմից պալատը իրաւունք ունի նորան իւր միջից հանելու, որովհետև անգլիական օրէնքով պարլամենտի անդամը մտնելուց առաջ պարտաւոր է որոշ երդումն տալու: Ինչպէս երևում է Եւրոպայի ամեն պարլամենտները ունեն իրենց չար, անհամեստ զաւակները:

* * *

«Times» Լօնդօնի լրագրին հեռագրում է նորա թղթակիցը Թունիսից իւր բէյի հետ ունեցած տեսութեան մասին, որտեղ բէյը նորան ասել է, որ իւր դրութիւնը, իբրև Բ. Դրան ստորադրեալի, երբէք Եւրոպայից չէ հերքուել: Նա միշտ աշխատել է կատարելու սուլթանի, իւր գլխաւոր տիրոջ, բոլոր պահանջները, որը երկու անգամ հեռագրով իրան բէյին իւր հաճութիւնն է յայտնել: Բէյը այդտեղ յիշեց այն պայմանագիրը, որով միատեսակ ապահովացվում են Թունիսում ապրող բոլոր եւրոպացիների արտօնութիւնները: Ռուստանը (ֆրանսիական հիւպատոսը) այս վերջին տասներեք ամսուայ ընթացքում անդադար առաջարկել է նորան (բէյին) Ֆրանսիայի խնամակալութիւնը, որը ընդունելու թոյլ չեն տալիս ոչ պայմանագիրերը տէրութիւնների հետ և ոչ էլ նորա յարաբերութիւնը սուլթանի հետ: Նա մերժեց ֆրանսիական զօրքերին իւր երկիրները մտնելու և երբէքնա այդ բանին չի համաձայնուիլ: Նա կարող չէ զէնքով դիմադրել ֆրանսիացիներին, բայց կ'բողոքէ և կ'մնայ իւր տեղումը: Բէյը մասնաւորապէս հրաւիրում է Անգլիայի և Իտալիայի բարեմիտ համակրութիւնը և յանձնում է իւր բաղդը Եւրոպայի արդար դատաստանին:

⁂

Բօնից (Ալժիր) հեռագրում են ապրիլի 25-ից փարիզ. Գէնէրալ Լօժէրօնի գունդը մտաւ Թունիսի երկիրը և բանակ դցեց սահմանի վերայ և Կէֆէի մէջ, ոչինչ ընդդիմութեան չ'հանդիպելով մինչ այժմ: Ցորդ անձրևները շատ դժուարացնում են զօրքերի առաջ գնալը: Փոթորիկի պատճառով զօրքերի ցամաք դուրս գալը Տաբարկայ կղզու վերայ անկարելի է:

⁂

Փարիզից հեռագրում են ապրիլի 22-ից Բերլինի «Վօլֆի գործակալութեանը», որ Թունիսից ստացած լուրերին համաձայն այնտեղ սասցել են սընդուկներ լի զէնքերով և ատրճանակներով Իտալիայից, որոնք իսկոյն բաժանեցին: Կրումիրներին ուղարկուել են շատ պատերազմական գործիքներ, մի քանի հրացաններ բռնուել են և պահվում են ֆրանսիական հիւպատոսարանում: Երկաթուղու գծի վերայ նոր բռնութիւններ են գործուել:

«ՄԵՂՈՒԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ).

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21-ին ապրիլի: Այսօր արտաքոյ կարգի պարսկական դեսպանը իւր աջակիցներով երեք ժամին կէսօրից յետ գնաց Պետրօպաւլովսկի մայր եկեղեցին, եկեղեցին մտնելիս բոկոտն մերձեցաւ 'ի Տէր հանգուցեալ Թագաւոր Կայսեր գերեզմանին և մի քանի րոպէ աղօթելուց յետ դրեց ճոխ պսակ թարմ ծաղիկներից պարսկերէն վերնագրով — Կայսր Ալէքսանդր Երկրորդին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21-ին ապրիլի: «Կառավարչական Համբաւաբեր» ում հրատարակած է Բարձրագոյն հրաման՝ ելևմտից պաշտօնէութեան իրաւասութեան ներքոյ եղող դպրոցները յանձնել լուսաւորութեան պաշտօնէութեան:

Ապրիլի 18-ի գիշերը փոթորիկի ժամանակ այրվեցաւ Կրասնօեարսկ քաղաքի ամենալաւ կէսը. հրդեհը ոչնչացրել է կառավարչական հաստատութիւնք և դպրոցները:

Կ. ՊՕԼԻՍ, 21-ին ապրիլի: Սուլթանի իրատէն թոյլատրում է Բ. Դրան ընդունել տէրութեանց առաջարկած յունական-տաճկական սահմանագծի հարցի որոշումն:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Հասարակութեան խնդրանօք այսօր, ամսոյս 23-ին «Դօն—Ժուանի» տեղ կներկայացնեն «Տ. Օրբէլի գաղափարները», կօմ. 4 արար., թարգմ. պ. Աբգար Յովհաննիսեանի և «Ընտանեկան փոթորիկ», վօդ. մի արար. թարգմ. պ. Աբգար Յովհաննիսեանի:

⁂

Հայր Կ. Ալմանեանը գրում է ԹԵԼԱՒԻՑ. — Որովհետև «Մշակի» թղթակիցը անձնական կրքից դրդուած առանց ամաչելու № 56ի մէջ կրկնում է պնդելով որպէս թէ նոյն լրագրի № 40 մէջ հաղորդած լուրը, որ մի 20 տարեկան երիտասարդ խեղդվել է Ջվէլ-գալաւանի սուրբ Գէորգ եկեղեցու սենեակում սուտ չէ, և ասում է եթէ հարկ լինի կարող է երիտասարդի անունն և ազգանունն յայտնել, սկզբնատառերը Ս. և Ճ. են են. իսկ ես պարտ եմ համարում կրկնել և յայտնել, որ այդպիսի կրկնուող լուրը առանց որ և իցէ փաստի բոլորովին սուտ է, և մեր կողմից խորհուրդ ենք տալիս նորան՝ միւս անգամ գրելու ժամանակ սկզբնատառերը դնել Ա. և Ֆ., որովհետև այդ տառերի բոլորածի մէջ գտնվում են այբբէնի ամբողջ տառերը, և նորանցով կարելի է եզրակացնել ամեն մարդու անունն և ազգանունները:

—23-ին անցեալ փետրվար ամսոյ տեղւոյս քաղաքական կլուբում գաւառական ուսումնարանի ուսուցիչ Գ. Ռոստոմեանցը՝ կարդաց մի վրացերէն դասախօսութիւն Վրաստանի սկզբնաւորութեան առիթով, ուր ներկայ էին մեծ բազմութիւն վրաց և հայոց. ժողովուրդը՝ և մանաւանդ վրաց ազնուականները՝ բոլորովին համակրելով եռանդոտ երիտասարդին ամեն պարբերութիւն վերջացնելիս ծափահարում էին:

—Հայոց ուսումնարանների ուսման ընթացքը շատ լաւ է գնում, վարժապետները ժիր են իրանց պաշտօնին շնորհիւ տեղւոյս գործակալի, որ խրախուսում է նորանց՝ միշտ իրան ժամանակին բաժանելով նոցա հասանելի ռոճիկները:

⁂

ՍԻՄՖԵՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. — Սիմֆերոպօլի հայերը չունեն մի օրինաւոր կառուցած երկսեռ դպրոց. այժմեան դպրոցը մի հին տուն է և ոչ իսկապէս դպրոց, որոյ մի փոքր մասն էլ ուրիշի սեպհականութիւն է: Տունը իւր գետնով ընծայել է մի հայ մարդ և գտնվում է հայոց եկեղեցու հանդէպ: Դպրոցը չունէ մի հասարակ մատենադարան: Այստեղի հայերը ոչ մի տեսակ ընկերութիւն չունեն, միմիայն մի աղքատաց հոգաբարձութիւն կայ, որ ընտանի կերպով է կառավարվում առանց մի ոք և է դրամագլխի: Հասարակութիւնը չունէ ընթերցարան, այլ սրճանոցներն են նոցա զուարճութեանց տեղերը, ուր որ ցերեկուայ մեծ մասն են անցուցանում: Չունեն օրինաւոր առաջնորդ ժողովրդեան դասից: Քահանան բացի իւր անձնական շահերին դիմելուց, ուրիշ ոչինչի հոգս չունի: Նախկին քահանայի աշխատութեամբ դպրոցը մի դրամագլխով ապահով էր, իսկ ներկայ քահանայի օրերով (5 տարի) խառնակութիւնները անպակաս են:

Սիմֆերոպօլի հայերն ունեն և լաւ յատկութիւններ. օրինակի համար այստեղի հարուստ և միջին դասի ժողովուրդը առատաձեռն է: Նա յայտնի և գաղտնի բարեգործութիւն անել գիտէ: Նա առատօրէն տուել է օգնութիւն Ալաշկերտի գաղթականներին, Վանայ սովելոց 800 ռ. և Ռուբինեան երկրագործական ապագայ դպրոցին 800 ռ.: Քաղաքիս չքաւոր դասը զատկին, նոր տարուն և սուրբ ծննդեան տօներին հարուստներից, օգնութիւն են ստանում: Ժողովուրդը եկեղեցու և դպրոցի վերայ սէր ունէ, միայն առաջնորդող չունէ: Քահանան հոգս չէ անում ժողովրդի յառաջադիմութեան համար: Ծխական երկսեռ դպրոցը Մոժեան աղայի կտակած գումարով ապահովված է: Դպրոցը ունէ և այլ արդեանց աղբիւրներ, որոնք հասարակութեան շնորհիւ գտնուած են: Դպրոցը ունէ լաւ հոգաբարձութիւն հինգ ուսուցիչներով, որոնցից երկուսը օտարազգիք են:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Քիոսի երկրաշարժը. — Երկրաշարժ երկրաշարժի ետևից: Դեռ շատ ժամանակ չէ անցել որ զարհուրելի երկրային յեղափոխութիւնը Կրօատիայի գլխաւոր քաղաքը՝ Ագրամը և Կասամիցցիօլան՝ Իսքիում մի քանի րոպէի մէջ աւերակ և ամայի դարձրեց. այժմ էլ հեռագիրը լուր է բերում թէ նորից նոյն կործանիչ երկրաշարժը Քիոսը — «Յօնիական կղզիների դրախտը» իւր կատաղութեան զոհ է դարձնում: Քիոս քաղաքի $^{3}/_{4}$ մասը արդէն գետնի հաւասար է դառել. 4,000 մարդիկ զոհ են գնացել, բայց և այնպէս դեռ շարունակվում է երկրաշարժը և Քիոսը կրկին մի նոր ժամանակադար է կազմելու իւր աւերակներով: Սուլթանը ընդունել էր արդէն Քիոսը իւր նոր յեղափոխութեանց փորձնատեղը. Քիոսի նաւահանգիստը պիտի վերանորոգվէր և ազատ նաւահանգիստ հրատարակվէր, քաղաքի զինուորական մասը չէզոք դիրք ընդունած էր և իբրև ներկայացուցիչ, օրինակ ընդունված էր. մի շոգենաւի ընկերութիւն մտադիր էր արդէն ընդհանուր մի նաւավարական յարաբերութիւն հաստատել այդ կղզիների խմբի մէջ. Քիոսը կենդրոնատեղի ընդունելով կղզիների վիլայէթի վարչութեան կեդրոնատեղին Ռօդոսից Քիոս էր տեղափոխվել — Քիոսը սպասում էր մի բաղդաւոր ապագայի: Բայց նա սխալվեց իւր յուսոյ մէջ, ստորերկրեայ տարերքը նոր յոյսերը յանկարծակի ի չերև հանեցին, այնտեղ, ուր մի օր առաջ ծիծաղուն մարգագետիններ, հարուստ քաղաքներ և բաղդաւոր մարդիկ էին, այսօր մահ և աւերակներ են ներկայանում քեզ:

Քիոսի բնակիչները ամենքն էլ յոյն են, որոնք ազատութեան պատերազմի և Ալի փաշայի արեան բազմանեայ հետքերի մնացորդներ են — որոնք պատերազմից առաջ 1822-ին 100,000 էին, իսկ այժմ միայն 40,000: Ոչ մի տեղ հելլենական ոգին և սիրտը այնպէս սերտ և կենդանի չէ մնացել, ինչպէս քիոսցիների մէջ — Քիոս, ուր Հոմերն է ծնել: Թէ Քիոսում Հոմերական սերունդ ապրում էր, կասկած չկայ, հնումն յայտնի էր «Հոմերական դպրոցը», այստեղ էին երգիչները իւրեանց սաներին շուրջը բոլորում և նա իրաւամբ կարող է պարծենալ իւր բանաստեղծներով, փիլիսոփաներով և արուեստագէտներով: Դեռ մինչև այսօր տիրապետում է այդ ոգին քիոսցիների մէջ, որոնք համարձակ ծովագնացներ են, որոնք լաւ վաճառականներ են, որոնք սէր ունեն դէպի արուեստը: Դեռ կենդանի է ժողովրդի բերանում իրանց պապերից ժառանգած առածը. «Թէ որ մի քիոսցի կայ, խումբը լաւում է», խմբի մասին խօսք չէ լինում: Ներկայ ուսումնարանական կազմակերպութիւնը վկայ է անցեալի, — 3,000 տղայք են յաճախում: Քիոսի գիմնազիան իւր քաղաքացիների հարուստ կտակներովն է ապրում և ունի 100 յաճախող: Կղզու իմաստուն կառավարութեան շնորհիւ, երկրի մէջ աղքատ չկայ, աղքատութիւն անկը և մուրալը վերջացած է վաղուց, այն ինչ այս մի յատուկ իրողութիւն է Թիւրք կառավարութեան ներքոյ եղող քաղաքների — այս ամենը անում է մի բարեգործական ընկերութիւն: Քիոսցիք յայտնի են իրանց խնայողութեամբ, ընտանեսէր, սուրբ չափաւորութեամբ և բարոյականութեամբ: Կղզու բերքերն են մաստիկա, նարինջ և կիտրոն. առաջինը խիստ «մօնօպօլի» ներքոյ է, իսկ վերջինները ազատ են 60 տարուց աւելի, այնպէս որ տարեկան 20—25 միլ. նարինջ և 30—35 միլ. կիտրոն է ընծեռում կղզին: Այս ամենը այժմ անապատացած է. բնակիչները երկիւղի և սարսափի մէջ են, կենում են ազատ դաշտի վերայ: Զմիւռնայում և Սիրայում ևս երկրաշարժի զարկեր նկատելի են եղել, բայց անվնաս:

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը նշանակելով նոր աճուրդախօսութիւն **ԲԷԹՂԵՀԵՄԻ ՋՐԱՆՑՔԻ** շինութեան համար 25-ին ներկայ ապրիլ ամսոյ, հրաւիրում է կապալառուներին այս շինութիւնը յանձն առնուլ ցանկացողներին գալ վարչութեան առեանը նշանակեալ ժամանակ: Նախագիծը, նախահաշիւն և պայմանները կարելի է տեսնել վարչութենում ամեն օր 11 ժամից մինչև 2-ը: 2—3

«ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ» անցեալ տարուայ անդամները և ցանկացողները անդամ դառնալու կարող են դիմել ընկերութեան գանձապահ պ. Մովսէս Թաւադեանին, Թիֆլիսի առևտրական բանկա անդամակցական վճարը հատուցանելու և տոմսակ ստանալու:

Ժողովել եմ, ժողովում եմ և շուտով ի լոյս պէտք է ածեմ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ **«ԾԱՂԿԱՔԱՂ ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԵՐԳԱՐԱՆ»**. ուստի խնդրում եմ ձայնագրագէտներին և այն պարոններին, որոց մօտ գտնվում են ազգային երգեր թէ հայկական և թէ եւրոպական ձայնագրութեամբ (նոտաներով) բարեհաճել մինչև յառաջիկայ օգոստոս ամիսը ուղարկել ինձ: Երգեր ուղարկողների անունները կտպագրուին երգարանի վերջը և մի մի օրինակ էլ ձրիաբար կստանան: Արժանաւորութիւն պահանջողներն էլ կարող են իրանց պայմանները յայտնել: Իմ հասցէն: Տփխիս, Եղիշէ քահանայի Երզնկեանց: 1 10

«ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹԻ» ստորագրվողներից ստանում եմ նամակներ, որոնցով յայտնում են իրենց անհամբերութիւնը «Թերթը» հասանելու մասին, այս պատճառով հարկաւոր եմ համարում նմանապէս յայտնել, որ «Թերթի» տպագրութեան ուշանալու պատճառն այն է, որ ես դեռ չեմ ստացել կառավարութիւնից հրատարակման թոյլտուութիւնը, որ սպասում եմ օրէց օր: Թոյլտուութիւնն ստանալուն պէս, կարճ միջոցում կը թողնեմ «Թերթիս» համարները հայոց երկրի բոլոր կողմերը: Իսկ առ ժամանակ կը խնդրեմ «Առողջապահական Թերթի» ստորագրվողներին պահպանել իրենց առողջութիւնը ըստ սովորութեան նախնեաց:

Երևանի քաղաքային բժիշկ

Լևոն Տիգրանեանց·

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Իմ հրատարակութիւններիս առաջին գիրքը «ՔՆԱՐ ԽՕՍՆԱԿ». գինն է 50 կ. Հասցէս՝ Шуша Тиграну Назарьянцъ.

Վաճառվում են Կովկ. գրավաճառան. Զ. Գրիգորեանցի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐ.

1) Ա. Մ. Ե. Պ. Դիւցազունք ըստ Խորենացւոյ՝ Հայկ, Արամ, Վահագն. պատկերներ պատմական կեանքից: Տփխ. 81 թ. գինն է 30 կ.:
2) Կոստանեանց. Կ.—գրաբառ բայերի խոնարհումը մի աղիւսակի մէջ. գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար, գինն է 25 կ.:
3) Երզնկեանց—Եղ. քահ.,—խմբական ձայնագրեալ ազգային երգեր (սախտաթի). գինն է 50 կ.:
4) Մօրիս—Լօբ վարժի ձեռնարկ գործնական մանկաւարժութեան. Թարգմանեց զանազան փոփոխութիւններով Ս. Պալասանեանց. 50 կ.
5) Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց. 80 կ.:
6) Ջօն Ստ. Բլէկկի—«մտաւոր Ֆիզիքական և բարոյական ինքնակրթութիւն». 60 կ.:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ՝

Հրատարակութեամբ Զ. Գրիգորեանցի.

1) Ծերենցի—Թէոդորոս Ռշտունի:
2) — «Թորոս Լևոնի» (2-դ տպագրութիւն):
3) Գամառ-Քաթիպայի—մանկական երգեր և տաղաւորներ:

6—12

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է «Կենտրոնական» և պ. Զ. Գրիգորեանցի «Կովկասեան» գրավաճառանոցներում **«ՄՏԱՒՈՐ, ՖԻԶԻՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»** գիրքը, հեղ. Ջօն Ստիւարտ Բլէկկիի, թարգմ. Գրիգոր Շահբուդաղեանի: Գինն է 60 կոպէկ: Օտարաքաղաքացիք կարող են ուղղակի թարգմանչին դիմել այս հասցէով՝ въ Тифлисъ, учителю Армянской Духовной Семинаріи Нерсисянъ, Григорію Шахъ-Будагянцу.

—

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է թարգմանչի հետևեալ աշխատութիւնը· **ՄԱՅՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱՑ ՎԵՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ»**, հեղ. Ժ. Բամբօսոնի:

Բացի յայտարարած տեղերից **«ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ»** լրագիրը **ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐՈՎ** ծախվում է և պ. Ղազար Տէր-Ղազարեանի խանութում, Միջի-փողոցում (Հայոց բազարի) № 48.

ՇՈՒՏՈՎ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԿԸ ՄՏՆԻ

«ԷՍ ԷԼ ԻՄ ՍԱԶԸ»

անունով գիրքը, որ պարունակում է իր մէջ 90 դեռ լոյս չը տեսած բանաստեղծութիւններ:

Օտարաքաղաքացիք կանխիկ մէկ ռուբլ ուղարկելով, դիմում են ուղղակի հեղինակին հետևեալ հասցէով:

Чрезъ Просковейское почтовое отдѣленіе въ городъ Святаго—Креста (Стовропольс. губ.) Учителю Симену Сафаріанцу.

4—5

Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը յայտնում է, որ ձիաւոր ժանդարմների վաշտի բնակութեան համար հարկաւոր է **ՏՈՒՆ ՎԵՐԱՅՈՒՄ**, 7 սենեակով, խոհանոցով, ախոռով, խոտանոցով և բակով 400 քառակուսի սաժէն տարածութեամբ 6 տարի ժամանակով: Վարձ տրվում է 850 ռուբլի տարին: Ցանկացողք կարող են դիմել վարչութեան ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամը կէսօրից յետ, բացի կիւրակի և տօն օրերից:

2—3

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՏՈԿՈՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿ.

Ապրիլի 15-ից մինչև նոր կարգադրութիւն.

Վճարում է.

1. Ընթացիկ հաշւով.
   - ա. Հասարակ . 4%
   - բ. Պայմանաւոր 4 1/2%
2. Գումարների աւանդ.
   - ա. Մինչև ցպահանջ 4%
   - բ. 6 ամսով . 5 1/2%
   - գ. Մի տարով . 6%
   - դ. Երկու տարով և աւելի 6%

Վերցնում է.

1. Զեղջումն առևտրական մուրհակների 6 ամսով . . 7%
2. Զեղջումն մուրհակների, ապահովութեամբ անշարժ կայից . 7%
3. Արժէթղթերի գրաւականով ընդունելիք պետական բանկայից 6 ամսով . . 7%
4. Մասնաւոր ընթացիկ հաշիւ.
   - ա. Ապահոված տոկոսաբեր թղթերով 7%
   - բ. Մուրհակներով ապահովացրած երկու ստորագրութեամբ. 7 1/2%
5. Զեղջումն կտրոնքների և թղթադրամների . . 7%

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՆ

Վճարում է.

1. Ընթացիկ հաշւով 4%
2. Մինչև ցպահանջ աւանդի . . . 4%
3. 6 ամսական աւանդի 5%
4. Երկու և աւելի տարով աւանդի . 6%

Վերցնում է.

1. Զեղջումն առևտրական մուրհակների մինչև 6 ամիս 8%
2. Արժէթղթերի գրաւականով.
   - ա. Ընդունելիք պետական բանկայից 7%
   - բ. Անընդունելիք պետական բանկայից 8%
3. Մասնաւոր ընթացիկ հաշիւներ՝
   - ա. Ապահովացրած արժէթղթերով . 7%
   - բ. Ապահ. վայրած մուրհակներով . 7 1/2%

Ցանձնարարութիւններ 1/16% —2%.

ՓՈԹԻ—ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ.

Թիֆլիսից դէպի Փոթի դուրս է գնում.

	Ժամեր.			Տեղերի գինը.		
	առաւ.	կէս օր.	երեկ.	I կլ. ռ. կ.	II կլ. ռ. կ.	III կլ. ռ. կ.
Թիֆլիզ	9. 21	12. 56	5. 18			
Մցխէթ	10. 11	1. 57	6. 27	1. 13	85	44
Գօրի	11. 58	4. 35	9. 43	4.	3.	1. 53
Միխայլ.	1. 29	6. 45	11. 57	6. 30	4. 73	2. 42
Րիօն	6. 56	գիշեր 1. 45		11. 25	8. 44	4. 31
Փօթի				16. 31	12. 24	6. 26

Փօթիից դէպի Թիֆլիզ.

	Ժամեր.			Տեղերի գինը.		
	Առաւ.	երեկոյ.	գիշեր.	I կլ. ռ. կ.	II կլ. ռ. կ.	III կ. ռ. կ.
Փօթի	9. 3	10. 22				
Րիօն	12. 13	3. 30		5. 13	3. 84	1. 97
Միխայլ.	5. 39	10. 1	1. 37	10. 1	7. 51	3. 84
Գօրի	7. 5	կէսօր. 12. 20	4. 8	12. 33	9. 24	4. 73
Մցխէթ	8. 50	3.	7. 59	15. 19	11. 39	5. 82
Թիֆլիս				16. 31	12. 24	6. 26

Առաջին գնացքը Թիֆլիզ հասնում է 9 ժ. 31 ր. առաւօտեան, երկրորդը 3 ժ. 51 ր. կէսօրից յետ և երրորդը 7 ժ. 56 ր. առաւօտեան:

ՉԵՆ ՀԱՍՑՐԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

21 ապրիլի

Մարգարովին, Բեկովին, Վասիլևսկային, Գէորգ Նազանովին, Լէվիցկուն, սպայ Սարգիսբէկովին, Վասիլի Դմիտրիևին:

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Կուկիայում, Սիմէօնովսկի փողոցի վրայ, Հախվերդեանի տանը:

Հիւանդներին ընդունում են ամեն օր, նաև տօն օրերին առաւօտեան ժամի 9—11. ԼՈՒՆԿԵՎԻՉ—աչքերի, կաշուի և վեներական հ., ԲՈՒԴԿՕՎՍԿԻ — կանանց և ներքին հ., ժամի 11—1., ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—խիրուրգիական և վեներական (սիֆիլիտական) հ., ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ—ներքին հ. ժամի 5—7. ՊԱՎԼՕՎՍԿԻ—ջղային, հոգեկան և ներքին հ., ՈՒՇԱԿՈՎ—երեխայոց հ., ԾԱՂԿԱՀԱՏՈՒԹԻՒՆ առաւօտեան ժամի 9—11, չորեքշաբթի և շաբաթ օրերը երեկոյեան ժամի 7—8 ընդհանուր ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ: Հիւանդանոցը ունի գիշերապահ բժիշկ և ընդունում է ԳԻՇԵՐՕԹԻԿ հիւանդներ:

ԱՂՔԱՏՆԵՐԻՆ անվարձ է բժշկական խորհուրդը և դեղը:

Հիւանդանոցում բնակվում է բժիշկ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԸ·

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը սկսվում է ժամը 9-ին և շարունակվում է մինչև 1 կէսօրից յետ:

Երկուշաբթի.—Գավրոնսկի՝ մանկաբարձական և կանանց հիւանդութեանց համար,. Գորալէվիչ և Լիսիցեվ՝ ներքին հ., Ռոտինեանց՝ կանանց և երեխայոց հ., Բաբայեան՝ ջղային և ներքին հ., Շտեմբօրսկի՝ վեներական և կաշուի հ., Քիւչարեանց 1-ն՝ խիրուրգիական և աչքի հ.:

Երեքշաբթի.—Մինկէվիչ՝ խիրուրգիական հ., Բէյեր՝ աչքի հ., Բախուտով՝ մանկաբարձական. կանանց և երեխայոց հ., Լիսիցեվ և Վերմիշեվ՝ ներքին հ., Պետրովսկի վեներական հ.:

Չորեքշաբթի.—Կրասնօգլեադով և Լիսիցեվ՝ ներքին հ., Քիւչարեանց 2-դ՝ և Շտեմբօրսկի սիֆիլիտիքական և կաշուի հ.:

Հինգշաբթի.—Գավրօնսկի՝ մանկաբարձական և կանանց հ., Բէյեր՝ աչքի հ., Ռոտինեանց՝ կանանց և երեխայոց հ., Բաբայեան՝ ջղային և ելեքտրականութեամբ բժշկելի հ. (электротерапія), Լիսիցեվ և Պետրովսկի՝ ներքին հ., Քիւչարեանց՝ սիֆիլիսի և սեռական հ.:

Ուրբաթ.—Մինկևիչ՝ խիրուրգիական հ., Բախուտով՝ մանկաբարձական, կանանց և երեխայոց հ., Կրասնօգլեադով՝ Լիսիցեվ և Վերմիշեվ՝ ներքին հ., Շտեմբօրսկի՝ վեներական և կաշուի:

Շաբաթ. — Լիսիցեվ ներքին հ., Բէյեր՝ աչքի հ., Բաբայեան՝ ջղային և ներքին հ., Քիւչարեանց 2-դ՝ կանանց և ներքին հ., Պետրովսկի՝ վեներական հ.:

Օբրէխտ ատամի հ. ընդունում է իր մօտ խեղճ հիւանդներին ամենայն ժամանակ բժշկանոցի տոմսակով:

Գլխաւոր բժշկանոցի բժ. Լիսիցեվ:

ՓՈՍՏ

Թիֆլիզի փոստի կառավարութեան մէջ ընդունվում են և առաքվում, ամեն տեսակի և ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստի իրեր, ամենայն օր, բացի տօն օրերը, առաւօտեան 8 ժամից մինչև 1 կէսօրից յետ: Բացի դրամից ամեն օր, բացի կիւրակէ և տօն օրերը, առաւօտեան ժամը 7-ից մինչև 8 և 3-ից մինչև 7-ը կէսօրից յետ, իսկ կիւրակէ և տօն օրերը 7 ժամից մինչև 10 առաւօտեան և 3-ից մինչև 7 կէսօրից յետ, ընդունվում են և առաքվում հասարակ նամակներ:

Ռուսաստանի և արտասահմանի փոստը դուրս է գնում Թիֆլիսից ամեն օր բացի կիւրակէ և տօն օրերը, Փոթիի տրակտը (երկաթուղու միջոցով) ամեն օր, Երևանեան կարսինը երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ, Նուխունը և կախէթինը կիւրակէ և չորեքշաբթի, Բագուինը, Ելիսաւետօպոլի վերայով երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Նամակներ.

Քաղաքային փոստով նամակն արժէ 3 կ.:

Բաց նամակ օտար քաղաքներ 3 կոպ.:

Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները ծածկուած նամակը արժէ (1/6 լոտի ծանրութեամբ) 7 կ.:

Պատուիրած նամակների գինը կրկնակի է:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 22-го АПРѢЛЯ 1881 г.
Типографія Амб. Энфіаджіанцъ и К.
Տան բժշկապետ Մ. Ռոտինեանց·